



COVID-19-ի Կանխարգելումը Հանրային Վայրերում

Լոս Անջելեսի Շրջանում COVID-19-ի շարունակական տարածման պատճառով կան կանոններ, որոնք պետք է պահպանվեն՝ նվազեցնելու COVID-19-ի փոխանցման վտանգը հանրային վայրերում: Ստորև նշված կանոնները պահանջվում են Լոս Անջելեսի Շրջանի [Հանրային Առողջության Պատասխանատուի Հրամանով](#) և Լոս Անջելես Քաղաքի [Պատվաստված Լինելու Հաստատման Հրամանագրով](#): 2021 թվականի Նոյեմբերի 8-ին Լոս Անջելես Քաղաքը գործարկել է [SafePassLA](#)-ն, որը պահանջում է COVID-19-ի դեմ լիովին պատվաստման ապացույց Լոս Անջելես Քաղաքի տարբեր փակ և բացօթյա բիզնեսներում, վայրերում և միջոցառումների ժամանակ: Հաշվի առեք, որ բացի Հանրային Առողջության Վարչության և քաղաքային պահանջներից, հաստատությունները և միջոցառումների կազմակերպիչները կարող են սահմանել իրենց սեփական կանոնները: Տոմս գնելուց կամ այցելելուց առաջ ստուգեք բիզնեսի, միջոցառման կազմակերպչի կամ վայրի կանոնները:

Դիմակ Կրելու, Թեստավորման և Պատվաստման Պահանջների, ինչպես նաև Լոս Անջելեսի Շրջանի և Լոս Անջելես Քաղաքի Հանրային Վայրերի Հաճախորդներին/Հյուրերին Ուղղված Հորդորների Ամփոփագիր

Վայրը	Հաստատության, Տարածքի կամ Միջոցառման Տեսակը	Դիմակ Կրելը ¹	Պահանջվում է COVID-19-ի դեմ լիովին պատվաստված լինելու կամ վերջերս արված բացասական թեստի ապացույց ²
Փակ	Ժամանցային վայրեր կամ Միջոցառումներ ³ (մինչև 1000 մասնակից)	Պահանջվում է	Լոս Անջելես Քաղաք. <ul style="list-style-type: none"> Պահանջվում է Լիովին պատվաստման ապացույց Պահանջվում է Լուսանկարով ID 18+ տարիքի բոլոր անձանցից Լոս Անջելեսի Շրջան. <ul style="list-style-type: none"> Կարող է պահանջվել պատվաստում կամ թեստավորում հաստատության կողմից⁶
	Մեզա Միջոցառումներ ⁴ (1000 կամ ավել մասնակից)	Պահանջվում է	Լոս Անջելեսի Շրջան. <ul style="list-style-type: none"> Պահանջվում է՝ Լիովին պատվաստման կամ բացասական թեստի ապացույց
	Բարեր, Գարեջրատներ, Գինետներ/գործարաններ, Օղեգործարաններ, Գիշերային Ակումբներ և Լաունջներ ⁵	Պահանջվում է՝ բացառությամբ ակտիվորեն ուտելիս և խմելիս	Լոս Անջելեսի Շրջան. <ul style="list-style-type: none"> Պահանջվում է Լիովին պատվաստման ապացույց 12+ տարիքի բոլոր անձանցից
	Ռեստորաններ, Սրճարաններ, Ճաշարաններ, Արագ Սնունդի Կետեր, Հանդիսությունների Սրահներ ⁵	Պահանջվում է՝ բացառությամբ ակտիվորեն ուտելիս և խմելիս	Լոս Անջելես Քաղաք. <ul style="list-style-type: none"> Պահանջվում է Լիովին պատվաստման ապացույց Պահանջվում է Լուսանկարով ID 18+ տարիքի բոլոր անձանցից Լոս Անջելեսի Շրջան. <ul style="list-style-type: none"> Խստորեն հորդորվում է փակ տարածքներում սպասարկման համար: ⁶
	Մարզասրահներ կամ Ֆիթնես Կենտրոններ	Պահանջվում է	Լոս Անջելես Քաղաք. <ul style="list-style-type: none"> Պահանջվում է Լիովին պատվաստման ապացույց Պահանջվում է Լուսանկարով ID 18+ տարիքի բոլոր անձանցից
	Անձնական իսնամքի Հաստատություններ	Պահանջվում է	Լոս Անջելես Քաղաք. <ul style="list-style-type: none"> Պահանջվում է Լիովին պատվաստման ապացույց Պահանջվում է Լուսանկարով ID 18+ տարիքի բոլոր անձանցից




COVID-19-ի Կանխարգելումը Հանրային Վայրերում

Բացօթյա	Ժամանցային վայրեր կամ Միջոցառումներ³ (մինչև 5000 մասնակից)	Խորհուրդ է տրվում	Լուս Անջելեսի Շրջան. • Խստորեն հորդորվում է: ⁶
	Ժամանցային վայրեր կամ Միջոցառումներ³ (5000-ից 9999 մասնակից)	Խորհուրդ է տրվում	Լուս Անջելես Քաղաք. • Պահանջվում է Լիովին պատվաստման ապացույց Պահանջվում է Լուսանկարով ID 18+ տարիքի բոլոր անձանցից Լուս Անջելեսի Շրջան. • Խստորեն հորդորվում է: ⁶
	Մեզա Միջոցառումներ³ (10000 կամ ավել մասնակից)	Պահանջվում է	Լուս Անջելեսի Շրջան. • Պահանջվում է Լիովին պատվաստման կամ բացասական թեստի ապացույց 12+ տարեկան բոլոր անձանցից • Պահանջվում է՝ Լուսանկարով ID 18+ տարիքի բոլոր անձանցից

- ¹ Մանրամասների և բացառությունների համար ստորև տե՛ս *Դիմակ Կրելուն ուղղված պահանջները*:
- ² Մանրամասների համար ստորև տե՛ս *Ինչպես ապացուցել, որ պատվաստվել եք և ինչպես բավարարել թեստավորման պահանջները*:
- ³ Ժամանցային վայրերը կամ միջոցառումների անցկացման վայրերը ներառում են ժամանցի և հանգստի վայրեր, ինչպիսիք են ամռան կենտրոնները, կինոթատրոնները, ընտանեկան ժամանցի կենտրոնները, կենդանի ներկայացումների վայրերը, ներառյալ կատարողական արվեստի թատրոնները, երաժշտության և համերգների վայրերը, սպորտային արենաները, համաժողովների կենտրոնները, թանգարանները և ցուցասրահները:
- ⁴ Մեզա Միջոցառումները մեծաթիվ մարդկանց մասնակցությամբ միջոցառումներ են, ինչպես օրինակ՝ համաժողովները, կոնֆերանսները, ցուցահանդեսները (expo), համերգները, ներկայացումները, գիշերային ակումբները, մարզական միջոցառումները, կենդանի միջոցառումները և ժամանցային միջոցառումները, տոնավաճառները, փառատոները, ջրերթները, զվարճանքների թեմատիկ այգիները (theme parks), ատրակցիոնները, ջրաշխարհները, մեծ մասնավոր միջոցառումները կամ հավաքույթները, մարաթոնները կամ ավտոմեքենաների մրցումները և մեքենաների ցուցադրությունները: Փակ Մեզա Միջոցառումներն ունեն 1000 կամ ավելի այցելուներ: Բացօթյա Մեզա Միջոցառումներն ունեն 10000 կամ ավելի այցելուներ:
- ⁵ Եթե պատվաստված չեք, կարող եք գտնվել բացօթյա տարածքներում: Կարող եք ներս մտնել փակ տարածք՝ բացօթյա տարածք հասնելու, զուգարանից օգտվելու, պատվեր անելու, պատվերը վերցնելու կամ սննդի և ըմպելիքի համար վճարելու համար, եթե դիմակ եք կրում:
- ⁶ Հանրային Առողջության Վարչությունը խստորեն հորդորում է, որ հաստատության, ժամանցային վայրի կամ միջոցառման անցկացման վայրի կողմից պահանջվեն պատվաստման և/կամ բացասական թեստավորման ապացույց:

Ինչպես ապացուցել, որ ամբողջովին պատվաստված եք COVID-19-ի դեմ

Ապացուցելու համար, որ պատվաստվել եք COVID-19-ի դեմ, դուք կարող եք ներկայացնել ձեր COVID-19-ի դեմ պատվաստման քարտը, քարտի պատճենը կամ ձեր հեռախոսում կամ Էլեկտրոնային սարքի մեջ (օր.՝ պլանշետ/թափլեթ) պահպանված պատվաստման քարտի լուսանկարը: Կարող եք ներկայացնել նաև COVID-19-ի դեմ ձեր պատվաստման թվայնացված քարտը: Որոշ վայրերում անհրաժեշտ է ներկայացնել նաև լուսանկարով նույնականացման (ID) քարտ:



COVID-19-ի Կանխարգելումը Հանրային Վայրերում

Պատվաստման գրանցումների տարբեր տեսակների մասին իմանալու համար այցելեք Հանրային Առողջության Վարչության՝ [COVID-19-ի դեմ պատվաստումների գրանցումների կայքէջ](#) : Պատվաստման անվճար թվայնացված քարտը կարող եք ձեռք բերել myvaccinerecord.cdph.ca.gov կայքէջից:


Դուք համարվում եք COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստված, եթե անցել է երկու (2) շաբաթ՝

- COVID-19-ի դեմ Johnson & Johnson (J&J)/Janssen պատվաստանյութի միակ դեղաչափի ներարկումից հետո, կամ
- COVID-19-ի դեմ Pfizer կամ Moderna պատվաստանյութերի երկրորդ դեղաչափի ներարկումից հետո, կամ
- Ավարտել եք COVID-19-ի դեմ այն պատվաստանյութի շարքը, որն Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության կողմից [ընդգրկվել է արտակարգ իրավիճակներում օգտագործման ցանկում](#):

Հավելյալ տեղեկությունների համար տես [Ամբողջովին Պատվաստվելուց Հետո](#) էջը VaccinateLACounty.com կայքէջում:

Ինչպես բավարարել COVID-19-ի դեմ բացասական ախտորոշիչ թեստավորման պահանջը

Թեստավորման պահանջը բավարարելու համար դուք պետք է ներկայացնեք լուսանկարով նույնականացման քարտ (ID) և ձեր COVID-19-ի թեստի արդյունք, որն արվել է հաստատություն կամ միջոցառման վայր ձեր մուտք գործելուց առաջ 72 ժամվա ընթացքում:



- Թեստի արդյունքը պետք է լինի բացասական:
- Թեստի պատասխանը պետք է լինի տպված փաստաթուղթ, որը տրվել է թեստը տրամադրողի կամ լաբորատորիայի կողմից, կամ Էլեկտրոնային/տեքստային հաղորդագրություն թեստը տրամադրողի կամ լաբորատորիայի կողմից՝ պատկերված հեռախոսի Էկրանին:
- Թեստը պետք է լինի վիրուսային թեստ (սմուշ քթից կամ թքից), ինչպիսին է ՆԱԹ/ՊՇՌ (NAAT/PCR) կամ հակազենի թեստը: Հակամարմինների կամ սերոլոգիական (արյան) թեստերը չեն ընդունվում:

Դիմակ կրելու վերաբերյալ պահանջներ

Բոլորից պահանջվում է դիմակ կրել Լոս Անջելեսի Շրջանի բոլոր փակ հանրային վայրերում, հաստատություններում, հավաքույթների ժամանակ, ինչպես նաև հանրային և մասնավոր բիզնեսներում: Դիմակներ պահանջվում են նաև հանրային փոխադրամիջոցներից օգտվելիս, փոխադրամիջոցների կայաններում, բացօթյա մեզա միջոցառումներին մասնակցելիս և ցանկացած այլ բիզնեսում, որտեղ դա հանդիսանում է տվյալ հաստատության քաղաքականությունը:



- **Թույլատրվում է հանել դիմակը, երբ դուք՝**
 - Ակտիվորեն ուտում կամ խմում եք՝ նստած կամ կանգնած հատուկ վայրում, ինչպես օրինակ՝ սեղանի կամ բարի (counter) մոտ կամ տոմսով ձեռք բերված աթոռին (ticketed seat): (Դուք պետք է դիմակ կրեք նաև սպասարկմանը սպասելիս, մինչև հաջորդ ուտեստի կամ խմիչքի մատուցում և երբ նստած եք ուտելը կամ խմելը վերջացնելուց հետո):
 - Միայնակ գտնվում եք առանձին սենյակում/վայրում:
 - Տնցուղ եք ընդունում կամ լողում եք:
 - Ստանում եք անձնական հիգիենայի կամ խնամքի ծառայություն (ինչպես օրինակ՝ դեմքի խնամք կամ սափրում), ինչը հնարավոր չէ անել առանց դիմակը հանելու:

COVID-19-ի Կանխարգելումը Հանրային Վայրերում

Կան որոշ մարդիկ, որոնք չպետք է դիմակ կրեն, ինչպես օրինակ՝ 2 տարեկանից փոքր երեխաները, որոշակի առողջական խնդիրներ կամ հաշմանդամություն ունեցող մարդիկ և այլ անձինք, որոնք իրենց բժիշկը կարգադրել է չկրել դիմակ: 2-ից 8 տարեկան երեխաները պետք է դիմակ կրեն միայն մեծահասակի հսկողության ներքո: Դիմակներ կրելու վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ ph.lacounty.gov/masks:

Ձեռնարկեք լրացուցիչ քայլեր՝ ձեզ պաշտպանելու համար

- **Կրեք դիմակ մարդաշատ բացօթյա վայրերում, որտեղ հնարավոր չէ պահպանել ֆիզիկական հեռավորություն:**
 - Սա ներառում է հերթում սպասելը, օրինակ՝ տարածք մուտք գործելու, այն լքելու, պետքարանից օգտվելու կամ սնունդ կամ ըմպելիք գնելու համար: *Սա խստորեն հորդորվում է:*
- **Կրեք կրկնակի դիմակ կամ շնչառական սարք, եթե սերտ շփում ունեք այլ անձանց հետ, որոնք, հնարավոր է, ամբողջովին պատվաստված չեն:**
 - «[Կրկնակի դիմակը](#)» (վիրաբուժական դիմակի վրայից կտորե դիմակ կրելը) կամ N95 շնչառական սարքն ապահովում են ավելի բարձր մակարդակի պաշտպանություն, քան կտորե դիմակը: *Սա հատկապես կարևոր է, եթե դուք ամբողջովին պատվաստված չեք կամ ունեք իմունային անբավարարություն և գտնվում եք փակ կամ մարդաշատ բացօթյա վայրում:*
- **Պահպանեք ֆիզիկական հեռավորություն:**
 - Խուսափեք մարդաշատ վայրերից և, հնարավորության դեպքում, ուրիշներից պահպանեք առնվազն 2 ձեռքերի երկարությամբ հեռավորություն (մոտ 6 ոտնաչափ):
 - Փոքր երեխաներին պահեք ձեր կողքին, որպեսզի նրանք հեռու լինեն մյուսներից:
- **Հաճախակի լվացեք ձեր ձեռքերը:**
 - Լվացվեք օճառով և ջրով առնվազն 20 վայրկյան կամ օգտագործեք առնվազն 60% ալկոհոլ պարունակող ձեռքերի ախտահանիչ:
 - Խուսափեք կեղտոտ ձեռքերով ձեր դեմքին դիպչելուց և ուտելուց:
- **Ընտրեք ավելի լավ օդափոխությամբ բացօթյա զբաղմունքներ:**
 - Օրինակ՝ դրսում ճաշելիս ընտրեք բացօթյա նստատեղերով վայր: Հնարավորության դեպքում մարզվեք բացօթյա տարածքում: Եթե հնարավոր չէ բացօթյա տարածքում մարզվել, ապա ընտրեք լավ օդափոխությամբ փակ տարածքներ:

Իմանալու համար ավելին, թե ինչպես նվազեցնել ձեզ սպառնացող վտանգը և դանդաղեցնել COVID-19-ի տարածումը, ներառյալ՝ որ իրավիճակներն են ավելի վտանգավոր, այցելեք՝ <http://ph.lacounty.gov/reducerisk>:

Պատվաստումը COVID-19-ից պաշտպանվելու լավագույն տարբերակն է:

COVID-19-ի դեմ պատվաստումն անվճար է և հասանելի է ամբողջ Լոս Անջելեսի Շրջանում 5 տարեկան և ավելի բարձր տարիքի բոլոր անձանց՝ անկախ ներգաղթի կարգավիճակից:

Պատվաստման շատ վայրերում չի պահանջվում ժամադրություն:

Տանը պատվաստումը հասանելի է տունը լքել չկարողացող անձանց համար:

Այցելեք VaccinateLACounty.com և սեղմեք <<[ինչպես Պատվաստվել](#)>>՝ ձեզ մոտիկ պատվաստման վայր գտնելու համար,

կամ

Չանգահարեք **Հանրային Առողջության Վարչության Պատվաստումների Չանգերի Կենտրոն**՝ **833-540-0473** հեռախոսահամարով, որը գործում է ամեն օր՝ առավոտյան 8:00-ից երեկոյան 8:30-ը: